№ 172 Սեպտեմբերի 30 (Հոկտեմբերի 12) 1880 Սեպտեմբերի 30 (Հոկտեմբերի 12) № 172

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ:

Ոտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“.

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10–2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Ցայտ բարութիւն ընդունելու է առանց լրագրի:

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սովը դեռ չէ անցել: Ներքին տեսութիւն: Նամակ Ախալքալաքից: Նամակ Նոր-Բայազէտից: Նամակ Զարաքիլիսից: Նամակ Բաթումից: Նամակ Խմբագրին: Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: «Н. Вр.» լրագրը հայերի մասին: Թիւրքիա: Սպանիա:—«Մշակի» հեռագիրներ:—Ցայտարարութիւններ:

ՍՈՎԸ ԴԵՌ ՉԷ ԱՆՑԵԼ

Այն սովը, որ այդքան մեծ կատաղութեամբ սիրում էր անցած ձմեռը Թիւրքաց Հայաստանում, ինչպէս երևում է, դեռ ևս կատարելապէս անցեալ չէ: Ոչ թէ միայն ամբողջ աշխարհի հայերը, բայց և արևմտեան Եւրոպան և Ամերիկան, պաշտօնական, և ոչ պաշտօնական Ռուսաստանը մասնակցեցին նուիրատուութիւնների մէջ սովեալ հայերին օգնելու համար: Բաւական է յիշել մեր Թագաւոր Կայսրի ձեռքով յօգուտ Թիւրքաց Հայաստանի սովեալների շնորհված գումարը, Եւրոպայի զանազան ընկերութիւնների, հաստատութիւնների և մասնաւոր անձերի կողմից նոյն նպատակով ուղարկված դրամները, ռուս, գերմանացի, հրէայ, ֆրանսիացի, անգլեացի, թուրք, պարսիկ բազմաթիւ ազգանունները, որոնց անդադար հանդիպում էինք յօգուտ մեր եղբայրակից սովեալների նուիրատուութեան ցուցակների մէջ,—որպէս զի համոզվինք թէ որքան մեծ էր այն համակրութիւնը որ ցոյց տուեց ամբողջ քաղաքակրթված աշխարհը դէպի հայոց ազգը:

Ռուսաց մամուլի ամենանշանաւոր թերթը, «Голосъ» լրագիրը մինչև այժմ դեռ ևս շարունակում է նուիրատուութիւններ ժողովել յօգուտ Թիւրքաց Հայաստանի սովատանջների:

Ձմեռն անցաւ, հասաւ գարունն ու ամառը: Բոլորս հաւատացած էինք, որ սովող հոնձքի պատճառով սովը այլ ևս չի կրկնվի:

Բայց դժբաղդաբար այդպէս չէր: Կ. Պոլսից և Թիւրքաց Հայաստանից ստացած մասնաւոր նամակները մեզ տեղեկացնում են որ սովը Հայաստանում դեռ ևս շարունակվում է: Այդ տեղեկութիւնները կարդում ենք և Կ. Պոլսի հայոց լրագիրներում: Օրինակ Կ. Պոլսի մէջ հրատարակվող հայոց «Լոյս» լրագիրը, սեպտեմբերի 3-ի իր համարի մէջ տալիս է մի հրաւէր սովելոց օգնող կենտրոնական մասնաժողովից, որի մէջ դիմելով հայ հասարակութեանը, խնդրում է շարունակել նուիրատուութիւններ անել յօգուտ սովատանջների: Խերը Հայաստանում այս տարի այնքան աջող չեղաւ, որքան սպասում էին, իսկ որտեղ աջող եղաւ, այնտեղ գաշտերը այրվեցան և կողոպտվեցան քիւրդերի և այլ ասազակային ցեղերի ձեռքով:

Կ. Պոլսի կենտրոնական մասնաժողովը իր թէ մասնաւոր նամակներում և թէ պաշտօնական շրջաբերականների մէջ շնորհակալութիւն է յայտնում ռուսահայերին իրանց արած օգնութեան համար և խնդրում է դարձեալ շարունակել իրանց առատ նուէրները:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

Սեպտեմբերի 17

Թէև մեր համաքաղաքացիք սրանից մի քանի ամիս առաջ ինդրագրով դիմեցին Նորին օծութեանը հայոց Կաթողիկոսին, որ նա բարեհաճի Ախալցխայի Ս. Փրկիչ եկեղեցու կալուածների եկամուտից 2000 ռուբլի յատկացնել մեր դպրոցներին, բայց մինչև այժմ ոչինչ պատասխան չէ ստացված և մեր հոգաբարձուները այժմ ստիպված են 1880 81 ուսումնական տարվայ համար յատկացնել ծախսելու, փոխանակ նախորդ տարվայ 5000 ռուբլուն, պակաս քան 4000 ռուբլի: Ներկայ ուսումնական տարվայ համար հրավիրված են Թիֆլիսից նոր ուսուցիչներ:

Անցեալ օգոստոսին մեր երիտասարդներից մի քանիսը մի ներկայացումն տուին յօգուտ տեղական ընթերցարանի: Ներկայացրին Վարդան Սամիկոնեան» ողբերգութիւնը և «Թատրօնաշէն» վոդեվիլը: Ներկայացման զուտ արդիւնք գոյացաւ 41 ռուբլի:

Վերջին ժամանակ մեր քաղաքում գողութիւնները և ասազակութիւնները բաւականին շատացան: Մի ամսվայ ընթացքում կողոպտել են կամ կամնցել են կողոպտել 5 եկեղեցիներ, որոնց 4-ը գիւղերում, իսկ մինը քաղաքիս ռուսական եկեղեցին: Բայց դրանից մի քանի կրպակներ և տներ կողոպտեցին: Զարդարդներները յայտնի չեն:

Մեր քաղաքացիք Ի. Լիլոյտակ 25 ամեայ դաշտալուսին և Օգոստիանա Աղէքսանդր Բ. Կայսեր, անօրինել էին երկու չքաւոր երեխաներ ուղարկել քաղաքի հաշիվ, Թիֆլիսի Աղէքսանդրեան ուսուցչական ուսումնարանը ուսանելու, բայց այս ուսումնական տարին սկսվեցաւ, և այդ մասին մոռացվեցաւ:

Մեր քաղաքի պարտէզներից մինը, անցեալները մի գեղեցիկ մէջքց է զարդ դնում իր փչացած աթիւները ծախելու համար: Այդ մէջքցին ալիւրը ծախվում էր քաղաքում 2 ր. 40 կոպէկով. մեր պարտէզը յայտարարութիւն է տալիս փողոցներում, որ նա ալիւրը ծախում է 2 ռուբլով, հացը էժանացնելու նպատակաւ: Հարկաւոր չէ ասել, որ ամենքը շտապում են գնել ալիւր նոյն պարտէզից: Բայց յայտնվեցաւ, որ այդ ալիւրը սաստկի դառնահամ է և փչացած, որ ուտել անկարելի է: Մեր պարտէզը հարիւ ապտակեցաւ պատասխանատուութիւնից: Թողնում ենք ընթերցողին դատել այդ պարտէզի վարմունքը, որ իր մի քանի գուռ փչացած ալիւրը «տաղանդելու» համար, չէ վարանում վնասել հասարակաց առողջութեանը:

Անցեալ օր մեր քաղաքային պարտէզում պատահեց մի շատ խայտառակ անէք: Տեղոյս տէր- Ց. և Սուլդայ գիւղի տէր-Մ. քահանաները չը գիտեմ ինչ պատճառով քիչ էր մնում միմեանց թակէին: Նոքա միմեանց հայհոյում էին անպիսի փողոցային յիշոցներով, որ համեստութիւնը չէ թոյլ տալիս արտասանելու: Նոքա մերտում էին միմեանց «էշ», «իշի զուտ» և այլ այդ տեսակ ածականներով: Թէ հայերի քաղաքութիւնը և թէ բանաթիւռ դիմնորականներ հանդիսատես էին լինում այդ խայտառակ անէքին: Թէ այդպիսի անարժան հոգեորականները որքան ստորացնում են մեր ազգի պատիւը օտարաց առաջև թողնում եմ դատել ընթերցող հասարակութեանը: Դժբաղդաբար մեր գործակատար Թորչն ա. քահ. Բաղդասարը ուշադրութիւն չէ դարձնում այդպիսի զզուելի երևոյթների վրա:

Ինչպէս պ. Ցայտցին գրում է Ախալցխայից (№ 153 Մշակ) եկեղեցական գիւղերը Թորչն ք. Բաղդասարը տուել է 560 սամար ցորենի և գրաստ կաղալաս. (Վերջին 60 սամարը յիշեալ քահանան ուղարկել է, ի նպատակ ունելով ժողովրդի անբաւականութիւնը) այն ինչ այդ գիւղերից տասանորդ է ստացվել անցեալ 1879 թուին, չը նայելով տարվայ անպտղաբերութեանը, տալով քան 900 սամար գարի ու ցորեն: Իսկ այս տարի անկարելի կարող է մնել 1400–1500 սամար ցորեն ու գարի: Ցարդս քահանան մի չէրից միւսն է լցնում, ինչպէս ասում են, որովհետև իր անբարեխիղճ եղբայրը ևս ընթերակից է նրա գործերին:

* *

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ

21 սեպտեմբերի

Զուր չանցան «Մշակի» 154 համարում իմ արած մի քանի նկատողութիւնները, որոնք վերաբերում էին Նոր-Բայազէտում հեռագրատուն և դեղատուն չունենալու հարցերին: Հասարակութիւնը ըմբռնելով դրանց անհրաժեշտութիւնը, օրերս մեր տեղական ոստիկանութեան գլխաւորութեամբ, կազմից ժողովրդական վէճեր, որպէս զի բաղաքին պատկանող գումարից, որ գտնվում է Անդրկովկասեան Գրիկո